ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.03.2022թ. թիվ 03/26-1/3842-2022 գրությամբ «Վերտֆոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.02.2022թ. թիվ ՊՆ/02/951-2022 գրության հիման վրա, 07.03.2022թ. թիվ 03/26-1/3842-2022 գրությամբ նախաձեռնել է «Վերտֆոյ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վերտֆոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վերտֆոյ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 03/26-1/3842-2022 գրության՝ հայտնում ենք, որ պայմանագրային պարտավորությունները չեն կատարել աննախադեպ թանկացումների պատճառով: Մրցույթը կայացել է հունվար ամսին, համաձայնագրերի և ժամանակացույցի կազմումը մարտ ամսին, իսկ այդ ժամանակ արդեն մետաղներն ու տախտակը թանկացել է գրեթե 80%, այդ իսկ պատճառով անհնար է կատարել պայմանագրային պարտավորությունները: Խնդրում ենք հաշվի առնել նշված ֆորս մաժորային իրավիճակը և «Վերտֆոյ» ՍՊԸ-ին չզրկել գնումների գործընթացին մասնակցությունից»:

«Վերտֆոյ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/89 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.02.2022թ. թիվ ՊՆ/02/951-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպության միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նապարարությունը 24.02.2022թ. դրությամբ, միակողմանի ամբողջությամբ լուծել է՝ ՀՀ պաշտպանության նապարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-10/1-3 ծածկագրով գնման պայմանագիրը (14.04.2021թ. համաձայնագիր N 1):

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.02.2022թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարկվել է www.procurment.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/89 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-10/1-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
2. Պայմանագրին կից հավելված N 1-ի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 3 անվանում ապրանքների ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:
3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 14.04.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-10/1-3» գնման պայմանագրի N 1 Համաձայնագիրը:
4. ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ԱԲ վարչության պետը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված 10.02.2022թ. թիվ էփ-148 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում չմատակարարված ապրանքների քանակները և ուշացված աշխատանքային օրերը՝ ըստ պայմանագրերի.

(…)

Պայմանագիր N ԳՀԱՊՁԲ-21-10/1-3 կնքված 15.02.2021թ. (14.04.2021թ. համաձայնագիր N 1)

Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ (ջեռուցման մարտկոցներ Ա-600)

-3-րդ եռամսյակ՝ 1000 հատ, 65 աշխատանքային օր,

Տախտակ (տախտակ 6Х12)

-2-րդ եռամսյակ՝ 25 խ.մ, 129 աշխատանքային օր,

-3-րդ եռամսյակ՝ 25 խ.մ, 65 աշխատանքային օր,

Թիթեղ՝ մետաղական (ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ)

-2-րդ եռամսյակ՝ 500 ք.մ, 129 աշխատանքային օր,

-3-րդ եռամսյակ՝ 1000 ք.մ, 65 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը, խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությանը՝ տրամադրելու տեղեկատվություն պայմանագրի շրջանակներում գանձման ենթակա տույժերի և տուգանքների վերաբերյալ:

Ապրանքների ընդունման գործընթացի կասեցման օր սահմանել 31.12.2021թ.»:

5. Պատվիրատուն «Վերտֆոյ» ՍՊԸ-ին ուղղված 24.02.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-10/1-3 ծածկագրով գնման պայմանագրի (14.04.2021թ. համաձայնագիր N 1) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ եռամսյակում մատակարարել 25խ.մ «տախտակ 6Х12», 500ք.մ. «ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ», 3-րդ եռամսյակում մատակարարել 1000ք.մ «կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ, 25խ.մ «տախտակ 6Х12», 1000ք.մ «ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ», որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.02.2022թ. միակողմանի ամբողջական լուծում է պայմանագիրը...:»

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.03.2022թ. թիվ 03/26-1/3842-

2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.02.2022թ. թիվ ՊՆ/02/951-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-10/1-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 3 անվանում ապրանքների ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 14.04.2021թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-21-10/1-3» գնման պայմանագրի N 1 Համաձայնագիրը, որի N 1 հավելվածը՝ գնման ժամանակացույցը սահմանվել է հետևյալ տեսքով՝

ՀՀ դրամ

Ապրանքի							մատակարարման		
Հ/հ	CPV կոդ	անվանումը	Չ/մ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը/ժամկետը	
								2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1	44621110/501	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ (Ջեռուցման մարտկոցներ Ա-600)	հատ	5200	5200000	1000	ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135	-	1000
2	44119100/503	Տախտակ (Տախտակ 6x12)	խմ	139000	6950000	50	ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135	25	25
	44118300/503	Թիթեղ՝ մետաղական (Յինկապատ թիթեղ մետաղական 0,6 մմ)	քմ	2900	4350000	1500	ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135	500	1000

ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ԱԲ վարչության պետը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված 10.02.2022թ. թիվ էփ-148 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում չմատակարարված ապրանքների քանակները և ուշացված աշխատանքային օրերը՝ ըստ պայմանագրերի.

(…)

Պայմանագիր N ԳՀԱՊՁԲ-21-10/1-3 կնքված 15.02.2021թ. (14.04.2021թ. համաձայնագիր N 1)

Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ (ջեռուցման մարտկոցներ Ա-600)

-3-րդ եռամսյակ՝ 1000 հատ, 65 աշխատանքային օր,

Տախտակ (տախտակ 6Х12)

-2-րդ եռամսյակ՝ 25 խ.մ, 129 աշխատանքային օր,

-3-րդ եռամսյակ՝ 25 խ.մ, 65 աշխատանքային օր,

Թիթեղ՝ մետաղական (ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ)

-2-րդ եռամսյակ՝ 500 ք.մ, 129 աշխատանքային օր,

-3-րդ եռամսյակ՝ 1000 ք.մ, 65 աշխատանքային օր:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը, խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությանը՝ տրամադրելու տեղեկատվություն պայմանագրի շրջանակներում գանձման ենթակա տույժերի և տուգանքների վերաբերյալ:

Ապրանքների ընդունման գործընթացի կասեցման օր սահմանել 31.12.2021թ.»:

Պատվիրատուն «Վերտֆոյ» ՍՊԸ-ին ուղղված 24.02.2022թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Վերտֆոյ» ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-10/1-3 ծածկագրով գնման պայմանագրի (14.04.2021թ. համաձայնագիր N 1) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ եռամսյակում մատակարարել 25խ.մ «տախտակ 6Х12», 500ք.մ. «ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ», 3-րդ եռամսյակում մատակարարել 1000ք.մ «կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ, 25խ.մ «տախտակ 6Х12», 1000ք.մ «ցինկապատ թիթեղ մետաղական 0.6մմ», որոնք չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.02.2022թ. միակողմանի ամբողջական լուծում է պայմանագիրը...:»

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Վերտֆոյ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 03/26-1/3842-2022 գրության՝ հայտնում ենք, որ պայմանագրային պարտավորությունները չեն կատարել աննախադեպ թանկացումների պատճառով: Մրցույթը կայացել է հունվար ամսին, համաձայնագրերի և

ժամանակացույցի կազմումը մարտ ամսին, իսկ այդ ժամանակ արդեն մետաղներն ու տախտակը թանկացել է գրեթե 80%, այդ իսկ պատճառով անհնար է կատարել պայմանագրային պարտավորությունները: Խնդրում ենք հաշվի առնել նշված ֆորս մաժորային իրավիճակը և «Վերտֆոյ» ՍՊԸ-ին չզրկել գնումների գործընթացին մասնակցությունից»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>30</u>*** օրից ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերը շարադրված փաստական հանգամանքները՝ արձանագրում եմ, որ «Վերտֆոյ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 15.02.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Վերտֆոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է սույն ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից հայտնած այն դիտարկմանն, որ Ընկերության կողմից պայմանագրային

պարտավորությունների չկատարումը պայմանավորված է աննախադեպ թանկացումներով և խնդրել է հաշվի առնել նշված ֆորս-մաժորային իրավիճակը և «Վերտֆոյ» ՍՊԸ-ին չզրկել գնումների գործընթացին մասնակցությունից, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրի 7-րդ կետով սահմանված են անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) առաջացման դեպքերը, որոնց մեջ չեն մտնում Ընկերության կողմից դիրքորոշմամբ մատնանշված իրավիճակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.03.2022թ. թիվ 03/26-1/3842-2022 գրությամբ «Վերտֆոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վերտֆոյ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**